



**« ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՈՐՈՇՈՒՄ**



Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, [ss@ysmu.am](mailto:ss@ysmu.am)

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 13  
ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը՝ գիտական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. 2022-2023թթ. ուսումնական տարվա Համալսարանի գիտական ստորաբաժանման աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար (հաշվետվությունը կցվում է) (23-11-13-01).
2. Հանձնարարել Համալսարանի գիտության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ենկոյանին՝
  - 1) Շարունակել իրականացնել աշխատանքներ մրցունակ հետազոտական և գիտակրթական ծրագրեր նախագծելու և իրականացնելու ուղղությամբ(23-11-13-02).
  - 2) Մշակել ներհամալսարանական դրամաշնորհների տրամադրման մեխանիզմներ (23-11-13-03).
  - 3) Ապահովել «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի Նորարարությունների մրցակցային հիմնադրամի շրջափուլի շրջանակում իրականացվող «Ուղեղի վիզուալիզացիայի լաբորատորիա» դրամաշնորհային ծրագրի պահանջների կատարումը և իրականացնել անհրաժեշտ միջոցառումների համալիր Ուղեղի վիզուալիզացիայի լաբորատորիայի ստեղծման ուղղությամբ (23-11-13-04).
  - 4) Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա ներկայացնել ակադեմիական ազնվության ապահովման, գրագողության կանխարգելման ու բացահայտման ծրագրային փաթեթի ձեռքբերման և դրա տեղայնացման առաջարկ (23-11-13-05).


- 5) Բարձրագույն կրթության երրորդ մակարդակում մշակել նոր ասպիրանտական ծրագրեր (23-11-13-06).
- 6) Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ համատեղ մշակել և սահմանված կարգով հաստատման ներկայացնել Համալսարանի գրադարանի վերափոխման, միջազգային չափանիշներին համապատասխանեցման նախագիծ, ինչպես նաև առաջարկներ ակադեմիկական, գիտական և մասնագիտական էլեկտրոնային ռեսուրսներին Համալսարանի հասանելիությունն ընդլայնելու վերաբերյալ (23-11-13-07).
- 7) Մշակել հետազոտական կարողությունների փոխանցման նոր մեթոդներ և միջոցներ՝ գիտական հետազոտության մեջ վիրտուալ տեխնիկայի կիրառմամբ (23-11-13-08).
3. Շնորհել անվանական կրթաթոշակներ հետևյալ կլինիկական օրդինատորներին.
  - 1) Լիլիթ Արտակի Սարգսյանին՝ Գագիկ Բեգլարյանի անվան կրթաթոշակ, մանկաբարձության և գինեկուլոգիայի թիվ 1 ամբիոնի 2-րդ տարվա կլինիկական օրդինատոր՝ ամսական կտրվածքով 83.300 դրամ (կցվում է) (23-11-13-09).
  - 2) Արտյոմ Արմենի Աղաբաբյանին՝ Գուրգեն Բադալյանի անվան կրթաթոշակ, սրտաբանության ամբիոնի 2-րդ տարվա կլինիկական օրդինատոր՝ ամսական կտրվածքով 41.666 դրամ (կցվում է) (23-11-13-10).
4. Հաստատել «Օտարերկրացիների նախապատրաստական կրթության» կանոնակարգը (նոր խմբագրությամբ) (կցվում է) (23-11-13-11).
5. Հաստատել «Ուսումնական գործընթացի կազմակերպման մասին» կանոնակարգի փոփոխությունները և լրացումները (կցվում է) (23-11-13-12).
6. Հաստատել «Ռազմաբժշկական ֆակուլտետում ակադեմիկական կազմին ներկայացվող առանձնահատուկ պայմանների մասին» կանոնակարգի փոփոխությունները և լրացումները (կցվում է) (23-11-13-13).
7. Հաստատել «Մանկական դիմաձևոտային վիրաբուժություն» մասնագիտությամբ կլինիկական օրդինատորայի ծրագիրը՝ դիմաձևոտային վիրաբուժության բժիշկ մասնագետների համար (կցվում է) (23-11-13-14).
8. Հաստատել «Ռենտգենոլոգիայի հիմունքները և արդի մոտեցումները» լրացուցիչ ներդասանագիտացումը (կցվում է) (23-11-13-15).



9. Հաստատել «Համակարգչային շերտագրման հիմունքները և արդի մոտեցումները» լրացուցիչ նեղ մասնագիտացումը (կցվում է) (23-11-13-16).
10. Հաստատել «Մազնիսառեզոնանսային շերտագրման հիմունքները և արդի մոտեցումները» լրացուցիչ նեղ մասնագիտացումը (կցվում է) (23-11-13-17).
11. Հաստատել «Գերձայնային հետազոտման հիմունքները և արդի մոտեցումները» լրացուցիչ նեղ մասնագիտացումը (կցվում է) (23-11-13-18).
12. Հաստատել «Ռադիոիզոտոպային հետազոտման հիմունքները և արդի մոտեցումները» լրացուցիչ նեղ մասնագիտացումը (կցվում է) (23-11-13-19).
13. Հաստատել «Անոթների գերձայնային հետազոտում» լրացուցիչ նեղ մասնագիտացումը (կցվում է) (23-11-13-20).
14. Հաստատել «Մամոգրաֆիայի հիմունքները և արդի մոտեցումները» լրացուցիչ նեղ մասնագիտացումը (կցվում է) (23-11-13-21).
15. Հիմք ընդունելով «Թերապևտիկ ստոմատոլոգիայի» և «Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի» ամբիոնների վարիչների և պրոֆեսորների ընտրությունների հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը, հաստատել ընտրությունների հետևյալ արդյունքները՝
  - 1) «Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի» ամբիոնի վարիչ ընտրված համարել Աննա Ռուբենի Վարդանյանին (23-11-13-22).
  - 2) «Թերապևտիկ ստոմատոլոգիայի» ամբիոնի վարիչ ընտրված համարել Լազար Կարլենի Եսայանին (23-11-13-23).
  - 3) «Թերապևտիկ ստոմատոլոգիայի» ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Մարինա Միտուշի Մարգարյանին (23-11-13-24).
  - 4) «Թերապևտիկ ստոմատոլոգիայի» ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Վահե Յուրիի Ազատյանին (23-11-13-25).
16. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**



**Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**Տ.ԱՎԱԳՅԱՆ**

